

ուր բազմաթիւ հայեր կային, հակառակ նոցա կամաց Նիկողայոս Թորոսովիչին գաղտ ձեռնադրեց Ելմովի եպիսկոպոս, զնաց Կամենից և այնտեղ վախճանեց ու թաղուեց 1628 թուին, Նիկողայոս Թորոսովիչի ձեռնադրութեամբ՝ Լեհաստանի Հայոց կորստեան վիհը պատրաստելուց յետոյ:

(Շարահանգիւն)

Յ. Վ. Մ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Խճագիր-Էւան Արարայ Ամագիրոյ:

Արարատի էջերը զարդարելու և հնախուզից հետաքրքրութիւնը շարժելու համար՝ յօդուածիս հետ տալիս եմ 11 տող բւեռաձև արձանագրութեան օրինակ ևս, որ յանցեալ ամսեանն օրինակեցի յԱրմաւիր, երբ Բարձր Սարգիս վարդապետի հետ գնացել էինք Արմաւիրից տարած քարերը տեսնելու և բւեռագիր որոնելու, զորս 1820 թուին Հառան-Խան Սարգարն Երևանայ տանել տուած էր Սարգարապատի բերդի դրունքն ամրացնելու համար:

Այս քարը որ արդէն փոխադրել տուած եմ ձեմարանի դրան հանդէպն, ցարդ 14 օրինակ գանուածներէն տարբերվում է մաքուր յղկած լինելովն և նուրբ փորուած տառեր ունենալովն, վասն զի՝ քարը ոչ միւսների պէս լեռ ու կապոյտ քարէ, այլ տաշուելու յամար կարծր քար:

Այս քարը գտել էր Արմաւիրցի (Թափայ-Դիպի հայաբնակ գիւղ) Պ. Հայրապետն Մկրտչեանց, որին ի նշան շնորհակալութեանս ընծայեցի մի վերնաղգեստ (սալտոս) և ինչորեցի գարձեալ փորէ իւր բլրի ստորի արտը, ուր գնդէ գտնուին այլ ևս բւեռագրովք քարեր. իսկ տեղւոյն Կարապետ և Յովհաննէս Արժ. քահանայից յայտնեցի շնորհակալութիւնս նորա համար՝ որ այդ քարը խնամքով պահել տալով՝ ինձ իմացրին տեղը: Եւ յուսով եմ, որ մէշա այգպէս կվարուին և կվարձատրուին:

Այս բւեռագրութեան օրինակն լուսանկարով առնել տալով ուղարկեցի Հայազգի հռչակաւոր հնագէտ Պրաֆէսոր Պ. Քերովսէի Պատկանեանց ի Ս. Պետերբուրգ թարգմանութեան համար, որոյ

սլաւոսլաւնն գրեալ ի 29 անցելոյ Հոկտեմբերի ստացայ ի 11^ն Նոյեմբերի անցելոյ, որ է ըստ այսմ՝

« Զերդ Արբազնութիւն.

« Մեծաւ ուրախութեամբ և շնորհակալութեամբ ստացայ Զեր յարգելի գրութիւնն և հետը երկու արձանագրութիւնքը, որ մեզ այդքան հետաքրքրում են: Առաջինը 3 շաբթեայ շատ համառօտ և անխմանալի է ինձ. 1.) իսկ երկրորդը շատ հետաքրքիր և պատուական կերպի հանած լուսանկարով, տարաբաղդութեամբ պատկաս է ոչ թէ միայն սկզբից, այլ և գուցէ վերջից, այնպէս որ թվում է թէ քարի մէջ տեղն միայն մնացել է: Շատ ցանկալի կլինի եթէ միւս կտորներն ևս գտնվին, գտնէ լոկ սկիզբը: Մի ժամ չկայ որ ստացայ Զեր նամակը, ուրեմն դեռ ժամանակ չեմ ունեցել լաւ քննելու, միայն կարող եմ ասել որ թագաւորի անուն մնացած չէ մէջը, գուցէ միւս մասերի վերայ լինէր: Պարտնականութիւնը այն է, որ մի թագաւոր զանազան աստուածոց նուիրումէ սրին եզ, որին ոչխար 2.):


Այդպիսի լուսանկար պատճէնը շատ դիւրընթեռնելի է, բայց այս արձանագրութիւնը ունի ևս այն նշանակութիւնը, որ մէջը պատահում են մի քանի նոր նշաններ, որ ուրիշներու մէջ դեռ հանդիպած չեմ, և որոց նշանակութիւնը պէտք կլինի զննել: 3)

Գովելի է Զեր արածը, որ գուք այդ բեւեռագիր քարերը բերել էք տալիս էջմիածին, ուր ժամանակաւ լաւ ժողովարան կու-

1) Առաջին 3 շաբթ բեւեռագրութիւնն՝ սանդխաձե քարի վերայ փորածն է, որ տպագրեցաւ Արարատ ամսագրի մէջ՝ անցեալ Սեպտեմբեր ամսում, յերես 416:

2) Այս արձանագրութեան մէջ յիշած չաստուածոց նուէրներից երևում է, որ այս տեսակ քարերը ժամանակին կռատան ճակատի կամ դրան գլխի քար պէտք է եղած լինին, և կրօնական պատմութիւն են. ինչպէս քրիստոնէութեան դարու և մեր իսկ ժամանակի վանօրէից և եկեղեցեաց արձանագրութիւնքն են. որք մեծ մասամբ այս և այն մարդոյ նուէրքներն են յիշում, որով և նախնի բարեպաշտութեան պատմութիւն են կազմում:

3) Նորանշան բեւեռագիր տառք կամ բառք այս տեսակ են—



որոց նմանը իմ գտած 14 օրինակի մէջ ևս չկայ: Այժմ իսկ գրասեղանիս վերայ դրած կայ մի թղաչափ լայնութեամբ և երկայնութեամբ՝ նոյն-

Նենաք այդպիսի հազուագիւտ հնութեանց:

Ի վերջոյ թոյլ տուէք ինձ շնորհակալ լինել Ձեր ևւն .
 Պ. Պատկանեան իւր երկրորդ գրութեան մէջ որ՝ ի 15 այսր Նոյեմբերի ի լրումն առաջին գրութեան ասէ . « Ձեր ուղարկած վերջին արձանագրութեան ընթերցումը նոյն գրութեան մէջ է, ինչպէս որ գրել էի, այսինքն միջին հատուած գոլով մեծ արձանագրութեան՝ իւր այժմեան գրութեան մէջ գրեթէ անիմանալի է, և այդ շատ ամստեսալի է. որովհետեւ առհասարակ վանի արձանագրութիւնք ըստ մեծի մասին միակերպ են. իսկ այս արձանագրի մէջ շատ նորանոր և ցայժմ անյայտ նշաններ կան և խօսքեր: Գլխաւոր պարունակութիւնը արդէն գրել էի Ձեզ:

Մնամ Սրբազնութեան Ձերում

. . . ԳԵՐ. ՊԱՏԿԱՆԵԱՆ.

Իմ սիրելի զբաղմունքն է փոշիների տակ մնացած հայրենեաց յիշատակարանները ի լոյս ածել, թերեւս յաջողի արձանագիրս ամբողջացնել պակասորդն ևս գտնելով:

ՄԵՍՐՈՎԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

պիսի մաքուր յղած ու փորագրած քարի կտոր՝ 1884 թուին Արմաւրից բերած, որոյ վերայ ևս կան սոյն նորանշան տառերն, և 5 տողի սկզբնաւորութիւն են կազմում. և այսոքիկ են:

1 

2 

3 

4 

5 